# ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿ

## Թեմա՝

## *«Նունկիմ քաղաքի խելոքները»*

Ավետիք Իսահակյան

*«Մայրենի»*
*5-րդ դասարան*

Սույն սահիկաշարով ներկայացվում է ձևավորող գնահատման առարկայական գործիք, որը կազմվել է 5-րդ դասարանի «Մայրենի» ուսումնական առարկայի օրինակելի թեմատիկ պլանով ներկայացվող ***«Նուկիմ քաղաքի խելոքները»*** թեմայի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները գնահատելու համար:

Տրվում են գնահատման տարբեր գործիքների՝ «Ստուգաթերթի», «Լուսացույցի» «Գնահատման անիվի» ձևանմուշներ, որոնք ուսուցիչը կարող է կիրառել ինքնագնահատման, փոխադարձ գնահատման ընթացքում՝ կախված դասի նպատակից, կիրառվող ուսուցման մեթոդներից, հանձնարարվող առաջադրանքների տեսակներից և այլն:

Ուսուցիչը կարող է «Նուկիմ քաղաքի խելոքները» թեմայի ուսուցման ավարտին լրացնել  ստուգաթերթը՝ սովորողների կողմից թեմայի յուրացման մակարդակը գնահատելու, յուրաքանչյուր սովորողի՝ թեմայի յուրացման հետ կապված դժվարությունները, հաջողությունները վեր հանելու, սովորողներին հետադարձ կապ ապահովելու և դասավանդման մեթոդաբանությունը հետագայում բարելավելու նպատակով:

**Թեմայի վերջնարդյունքներ՝**

**ԹԵՄԱ.** ***«Նուկիմ քաղաքի խելոքները»:***

***Ձ-ծ-ց բաղաձայնների ուղղագրությունը:***

| | Սովորող 1 | Սովորող 2 | Սովորող 3 |
|---|---|---|---|
| Ներկայացնում է հեղինակի մասին որոշ տեղեկություններ: | | | |
| Գիտի հեքիաթի դարձվածքների նշանակությունը: | | | |
| Գիտի ձ-ծ-ց ուղղագրության բառերի գրությունը: | | | |
| Վարժ և արտահայտիչ կարդում է հեքիաթը: | | | |
| Ձևակերպում է հարցեր ընթերցածի շուրջ: | | | |
| Պատասխանում է ուսուցչի տված հարցերին: | | | |
| Վերարտադրում է հեքիաթի բովանդակությունը: | | | |
| Առանձնացնում է հեքիաթի մասերը՝ սկիզբը, միջնամասը, ավարտը և վերնագրում: | | | |
| Նշում է Նուկիմի բնակիչների անխելքությունն ապացուցող հատվածներ: | | | |
| Դուրս է գրում հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունները: | | | |
| Դուրս է գրում հեքիաթի այն հատվածները, որտեղ խոսվում է «տաքդեղ», «խաղող» ու «շաքար» ուտելուց հետո պատգամավորների վարքագծի մասին: | | | |
| Կատարում է բառային աշխատանք. (հոմանիշ, հականիշ, նոր բառի կազմում): | | | |
| Արտահայտում է սեփական տեսակետը հեքիաթի գլխավոր հերոսների վերաբերյալ: | | | |


Շատ է դժվարանում
Մի փոքր դժվարանում է
Կատարում է առանց դժվարության
Կատարում է գերազանց
Կատարում է լավ

# Զրույց թեմայի շուրջ

**Հարցեր՝**

1. Ի՞նչ արարքներ պիտի գործի մարդը, որ խելացի համարես նրան:
2. Դու քեզ խելացի համարու՞մ ես: Պատասխանդ հիմնավորի՛ր:
3. Դու ի՞նչ արարքներ ես գործել: Պատմի՛ր դրանցից ամենատպավորիչի մասին:
4. Այլուսակում գրի՛ր երկուական խելամիտ և անհեթեթ մտքեր, որ կարող են ծագել մարդու գլխում:
5. Երբ դժվարլուծելի խնդիր ես ունենում, ու՞մ ես դիմում: Դեպքե՛ր հիշիր:

# Զրույցի մասնակիցների ինքնագնահատում և փոխադարձ գնահատում «հաջողության աստիճանին»

**Խելացի արարքների նկարագրում և հիմնավորում:**

- կարողանում եմ առանց դդժվարության
- կարողանում եմ, սակայն օգնության կարիք ունեմ
- դժվարանում եմ, չեմ կարողանում

**Անհեթեթ և խելացի մտքերի նկարագրում և հիմնավորում:**

- արողանում եմ առանց դդժվարության
- կարողանում եմ, սակայն օգնության կարիք ունեմ
- դժվարանում եմ, չեմ կարողանում

**Սեփական արարքների նկարագրում և հիմնավորում:**

- արողանում եմ առանց դժվարության
- կարողանում եմ, սակայն օգնության կարիք ունեմ
- դժվարանում եմ, չեմ կարողանում

Տրամաբանված մտքի արտահայտում

կարողանում եմ առանց դժվարության

կարողանում եմ, սակայն օգնության կարիք ունեմ

դժվարանում եմ, չեմ կարողանում

Կողմնորոշում դժվար իրավիճակում

կարողանում եմ առանց դժվարության

կարողանում եմ, սակայն օգնության կարիք ունեմ

դժվարանում եմ, չեմ կարողանում

# *Թեմայի շուրջ խմբային աշխատանք*

***Աշխատանք խմբերով.*** Նուկիմի խելոքների կողովը լցրե՛ք պահանջվող բառերով:

**1-ին՝ *Ուղղագրագետների խումբ***

**2-րդ՝ *Դարձվածքագետների խումբ***

**3-րդ՝ *Բառագետների խումբ***

# «ՈՒՂՂԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ»
## առաջադրանք

**1. Լրացրո՛ւ բառերի մեջ բաց թողնված տառերը:**

բար*րանալ

վեր*նել

հար*նել

փոր*ել

**2. Լրացրո՛ւ բառերի մեջ բաց թողնված ջ-ճ-չ տառերը:**

Ար*նաբույն, թր*ել, ող*ույն, կո*կել, դար*նագույն, կն*իթ, աղ*ամուղ*,

վայրէ*ք, ա*ք, մր*յուն, անուր*, բա*կոն:

# «ՈՒՂՂԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ» աշխատանքի գնահատում

| | | | |
|---|---|---|---|
| Բառերի մեջ բաց թողնված ձ-ց տառերի լրացում → | Բավական հեշտ էր: | Մի փոքր դժվար էր: | Դժվար էր: |
| Բառերի մեջ բաց թողնված ջ-ճ-չ տառերի լրացում → | Բավական հեշտ էր: | Մի փոքր դժվար էր: | Դժվար էր: |

# «ԴԱՐՁՎԱԾՔԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ»
## առաջադրանք

**1. Հեքիաթից դու՛րս գրիր կապույտով գրված դարձվածքները և բացատրի՛ր դրանց իմաստները:**

______________________________________________

______________________________________________

______________________________________________:

**2. Դրանցից մեկով կազմի՛ր նախադասություն:**

______________________________________________

______________________________________________:

# «ԴԱՐՁՎԱԾՔԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ» աշխատանքի գնահատում

Հեքիաթից դարձվածքների դուրս գրում և բացատրում →

Բավական հեշտ էր:

Մի փոքր դժվար էր:

Դժվար էր:

Դարձվածքներից մեկով նախադասության կազմում →

Բավական հեշտ էր:

Մի փոքր դժվար էր:

Դժվար էր:

«ԲԱՌԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ»
առաջադրանք

***1. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները:***

| | |
|---|---|
| մատուցարան ----------------------- | խանութպան ----------------------- |
| կողով ----------------------- | ճամփա ----------------------- |
| թագավոր ----------------------- | տաքդեղ ----------------------- |
| ճերմակ ----------------------- | անուշ ----------------------- |

***2. Տրված բառերից երկուսով կազմի՛ր նախադասություն:***

______________________________________________

______________________________________________

______________________________________________:

# «ԲԱՌԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ» աշխատանքի գնահատում

Տրված բառերի հոմանիշների գրում →



Բավական հեշտ էր:



Մի փոքր դժվար էր:



Դժվար էր:

Տրված բառերով նախադասությունների կազմում →



Բավական հեշտ էր:



Մի փոքր դժվար էր:



Դժվար էր:

# «Նուկիմ քաղաքի խելոքները» թեմայի շուրջ զույգային աշխատանքի կազմակերպում

**Աշխատանք զույգով.** Զույգին տրվում է տրված բառամասերով բարդ կամ ածանցավոր բառեր կազմելու առաջադրանք: Սովորողները, աշխատելով զույգում, գնահատում են մեկը մյուսի աշխատանքը՝ օգտագործելով գնահատման «Տոնածառ» հնարը:

# Զույգային աշխատանքի գնահատում

**Առաջադրանք. Տրված բառամասերով կազմի՛ր բարդ կամ ածանցավոր բառեր:**












# Բառային աշխատանքի կատարման գնահատման անիվ

Գնահատման անիվը ուսուցիչը կարող է կիրառել թեմայի շրջանակում ինքնագնահատում և փոխադարձ գնահատում իրականացնելիս:

Անիվի յուրաքանչյուր անվաճաղի վրա գրվում են սովորողից ակնկալվող թեմայի վերջարդունքները, որոնք կարող լինել տարբեր՝ կախված ուսումնասիրվող թեմայի բովանդակությունից և դասի նպատակից:

*(Գնահատման անիվը մանրամասն ներկայացված է ԿԶՆԱԿ-ի գնահատման մշակման և զարգացման բաժնում):*

# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆԻՎ

*Կարողանում եմ լրացնել բառի մեջ բաց թողնված ձ-ծ-ց տառերը:*

*Կարողանում եմ լրացնել բառի մեջ բաց թողնված ջ-ճ-չ տառերը:*




*Կարողանում եմ գրել տրված բառերի հոմանիշները և հականիշները:*

*Կարողանում եմ կազմել նախադասություն:*

Ներկայացված սահիկաշարով ուսուցչին տրվում է մեթոդական օգնություն՝ նշված թեմայի ուսուցման ընթացքում ձևավորող գնահատում իրականացնելու, սովորողներին հետադարձ կապ ապահովելու և հետագա ուսուցման - ուսումնառության գործընթացը բարելավելու համար:

Սահիկաշարում տրված գնահատման գործիքների նմուշօրինակով կարելի է մոդելավորել ցանկացած թեմայի վերջնարդյունքների գնահատման ընթացքը:

**Սահիկաշարը կազմելիս օգտագործվել են «Մայրենի» 5-րդ դասարանի համար ստեղծված ուսումնական նյութերից հատվածներ:**


**Սահիկաշարը կազմեցին**
Գայանե Մկրտչյանը և
Անի Մելիքսեթյանը